# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/69 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/69-1 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում աշխատանքների կատարման ծավալաթերթ նախահաշիվը և վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված Համաձայնագիր 4-ի համապատասխանաբար Հավելվածներ N 1-ի, N 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2022 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/69-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից աշխատանքի կատարման ձեռքբերման պահանջը չի դադարել և աշխատանքների կատարման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետերով սահմանված պահանջները

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**